

ԱՂԲԻՒԲ-Ի  
ԽՄԲԱԳՐԻՆ

410

411

412

413

414

415

416


417

825

ՈՒ-51

XXV - ԱՄԵԱԿԻ  
ԱԹՓԻՒ

1908 ԴԵԿ 23-ԻՆ



Переводно-издательской  
МАСТЕРСКАТЫ  
Е. В. ТВОРЬ-АНАКЕЛИИ  
Библиотека № 7

No 256

~~111~~

# ՆՈՒԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

321c

NE-5P

四

# ՎԵՐԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻԿ

*անդրանիկ Աւելյան*

## ՏԻԳՐԱՆ ԵԱԶԱՐՅԱԿԻՑ

18 ՆՈՅԵՄ 1918 թ, ԹԻՖԼԻՍ

13 ԴԻՑԻ 1918 թ., ԵՐԵՎԱՆ.

10

# ¶ U S P U E F

2004

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱTRIOT ՊՈBLԻCНA ՎԻՑՈՒԹԵՐԸ  
7/XI-1922  
ՀԱՅԱՍՏԱՆԻ Ազգային Գրադարան  
ԹԻՖԼԻՏ


Տպար. Յ. Մարտիրոսեանցի. || Տիպ. Ի. Մարտիրօսյանց.

Орбединовская ул., д. № 12.

1897

Доз. ценз. Тифлисъ, 3 апрѣля 1897 г.

II.



Ելլօն և Պատրաշը մէն-մե-  
նակ մնացին աշխար-  
հիս երեսին։ Նրանք  
մտերիմ բարեկամներ  
էին։ Նելլօն փոքրիկ  
տղայ էր, իսկ Պատրա-  
շը մեծ շուն։ Թէպէտ  
երկուսն էլ միւնոյն տարիքն ունէին՝ բայց մէ-  
կը դեռ մանուկ էր, իսկ միւսը արդէն ծերա-  
ցած։ Նրանք իրանց ամբողջ կեանքը զրեթէ  
միասին էին անց կացրել։ Երկուսն էլ անտէր  
մնացած որբեր էին, և երկուսին էլ միւնոյն  
ձեռքն էր կերակրել։ Այսպէս էր սկսուել նրանց

ծանօթութիւնը, որ օլէցօր աճելով՝ փոխուեց  
անկեղծ ու մտերիմ բարեկամութեան:

Նրանք կենում էին դիւզի ծալրին մի  
խրճիթում, որ շրջապատուած էր ընդարձակ  
դաշտերով և ոսկեղոյն արտերով: Ամբողջ դիւզը  
բազկացած էր մի տասը-քսան տնակներից,  
մուգ-կանաչ ու բաց-կապուտ փեղկերով և ճեր-  
մակ ներկած պատերով, որ ձիւնի նման պըս-  
պղում էին արևի տակ:

Գիւղի մէջտեղում, մամուապատ բլրակի  
վրայ, կար մի քամու ջաղաց, որ նոր եղած  
ժամանակ ներկուած է եղել կարմիր գոյնով.  
իսկ այժմ՝ քամու և վատ եղանակների ազգե-  
ցութիւնից՝ գոյնը կորցրել սեւացել էր: Նա շատ  
տարօրինակ էր պտուտ գալիս. թևերը մի քիչ  
պտուտ էին գալիս՝ մէկ էլ կանդ առնում և  
յետոյ նորից էին սկսում պտուտ գալ, կարծես  
ծերութիւնից շուտ-շուտ յոդնում էին: Չնայե-  
լով սրան՝ նա ծառալում էր բոլոր շրջակայ  
գիւղերին: Գիւղացիներն այնքան սովոր էին  
իրանց ջաղացին՝ որքան իրանց հին եկեղեցուն.  
ոչ ուրիշ ջաղաց էին գնում աղուն աղալու և  
ոչ ուրիշ եկեղեցի էին գնում պատարագ տեսնելու:

Եկեղեցին էլ շինուած էր հէնց ջաղացի դիմաց.  
նա մի հատիկ զանգ ունէր, որ ամեն օր առա-  
ւոտեան, ճաշին և երեկոյեան զարկում էր և  
տիսուր ձախն էր հանում:

Նրա տիսուր ձախնը հասնում էր մինչեւ  
այս խրճիթը, ուր ապրում էին Նելլօն ու  
Պատրաշը, որոնք իրանց փոքր հասակից սովոր  
էին ալդ ձախնին:

Խրճիթը պատկանում էր խեղճ ծերունի  
Յովհաննէս Պատարին, որ մի ժամանակ զինու-  
որ էր եղել և լիշում էր պատերազմի բոլոր  
սարսափները: Նրա բոլոր վաստակը պատերազ-  
մից այն եղաւ, որ ոտք վիրաւորեց և ամբողջ  
կեանքում կաղ մնաց:

Երբ ծերուկ Պատարը ութսուն տարին էր  
մտել՝ նրա աղջիկը մեռաւ, թողնելով երկու տա-  
րեկան մի տղայ Նելլօ անունով: Ֆերուկը ինքը  
պէտք է նրա հոգսը քաշէր. և նա իւր փոք-  
րիկ թունիկին ինամք տանելով շատ սիրեց  
նրան:

Նրանց խրճիթը հողաշէն էր, գաճով սուա-  
ղած. նա աղքատ, բաց շատ մաքուր էր.  
նրա չորս կողմը պարտէզ էր, ուր բուսնում

Էին լոբի, դղում և ուրիշ բանջարեղէններ:

Նրանք շատ և շատ աղքատ էին, այնպէս որ յաճախ ուտելու բան չէին ունենում: Թերունին շատ սիրում էր երեխային, որ գեղեցիկ, աղնիւ և քնքոյշ բնաւորութիւն ունէր: Նրանք շատ գոհ էին լինում՝ երբ մի կտոր չոր հաց էին ունենում և միայն այն էին խնդրում Աստծուց, որ Պատրաշն էլ միշտ իրանց հետ լինի:

Եթէ նա սատկէր կամ հեռանար նրանցից՝ նրանք այլեւս չէին կարողանալ ապրել, որովհետև ծերունի Պատրաշը անկարող էր աշխատել, իսկ Նելօն դեռ ևս փոքր էր:

Պատրաշը մի մեծ գեղին շուն էր, ամուր կազմուածքով, երկար ականջներով, ծուռ-ծուռ ոտներով և լայն ուժեղ թաթերով. նա այն տեսակ շներիցն էր, որոնց մարդիկ բանեցնում են, որոնց աշխատեցնում են քարքարոտ փողոցներում, զանազան գործեր են կատարել տալիս, մինչեւ որ խեղճերը չդիմանալով իրանց ծանր աշխատանքներին՝ վերջի ի վերջոյ սատկում են փողոցներում: Պատրաշի ծնողներն էլ այս տեսակ շներից էին, այնպէս որ նա արդէն ման-

կութիւնից սովոր էր կրել ամեն տեսակ նեղութիւններ: Նա գեռ հազիւ մի տարեկան կըլինէր, երբ նրան էժան գնով ծախեցին մի մանրավաճառի-չարչի, որ շըջում էր գիւղէ գիւղ մանր ապրանքներ ծախելու:

Նրա տէր չարչին կոպիտ, չար, հարբեցող մարդ էր: Նա իւր սալլակին բարձում էր ծաղկամաններ, կաթսաններ, դոյլեր և կաւէ, թիթեղէ, պղնձէ ուրիշ զանազան առարկաններ. այս բոլորը պարտաւոր էր քաշել խեղճ Պատրաշը, իսկ չարչին իւր սև չիբուխը ծխելով անհոգ գնում էր նրա կողքից և ճանապարհին ինչքան պանդոկ որ պատահէր՝ մտնում էր խմելու:

Բարեբախտաբար ասեմ թէ դժբախտաբար՝ Պատրաշը շատ ուժեղ էր: Նա չէր սատկում, այլ կարողանում էր դիմանալ այս դառն կեանքին: Կրում էր ծանր բեռներ, քաղց և ծարաւ, տօթ և ցուրտ, ծեծ և հայհոյանք:

Ամբողջ երկու տարի այսպէս անց կացրեց ծանր աշխատանքի մէջ:

Մի անգամ Պատրաշը դարձեալ քաշում էր իւր սալլակը փոշոտ, ձանձրալի ճանապար-

Հով: Ամարային շոգ օր էր. սալլակը ծանր էր և ամբողջապէս բեռնաւորուած էր կաւէ և թիթեղէ ամաններով: Տէրը դնում էր շան կողքից և երբեմն-երբեմն մտրակով խփում էր նրան, որ շուտ-շուտ գնայ. յոդնած կենդանին ամեն մի հարուածից ամբողջ մարմնով ցնցւում էր:

Սալլակի ծանրութիւնից, արևի այրող ճառագայթներից և մտրակի հարուածներից խեղճ Պատրաշը ուժասպառ էր եղել: Նա քաղցած ու ծարաւ էր, ամբողջ օր էր, որ ոչ կերել էր, ոչ խմել: Յանկարծ նա տատանուեց՝ վէր ընկաւ և բերանին փրփուր երևաց:

Նա ընկած էր սպիտակ, փոշոտ ճանապարհի մէջտեղը, արևի այրող ճառագայթների տակ: Նա սաստիկ յոգնել էր: Տէրը՝ հայհոյանք էր որ թափում էր նրա գլխին. բօթում էր ոտով, խփում էր դադանակով. բայց կարծես Պատրաշն այլևս չէր զգում ոչ նրա հայհոյանք-ները և ոչ հարուածները:

Մանրավաճառը կարծեց թէ շունն արդէն սատկել է և անօգուտ են իւր հայհոյանքներն ու փայտի հարուածները. նա յետ արաւ նրա վրայի սարքը, ձգեց նրան խոտերի մէջ և

փնթինթալով ու անիծելով՝ սալլակը քաշ տուեց սարն իվեր, թողնելով սատկող շունը մըր-ջիւնների և ագռաւների կերակուր:

Մանրավաճառն այսպէս շտապում էր՝ որովհետեւ հետևեալ օրը մօտակայ քաղաքում տօնավաճառ կար, և նա կամենում էր այնտեղ վաղօրօք մի լաւ տեղ բռնել: Նա սաստիկ զայրացած էր, որովհետեւ ստիպուած էր անձամբ քաշել սալլակը մինչև տօնավաճառը: Նրա մտքովն անգամ չանցկացաւ կանգնել և գոնէ վերջին անգամ հայեաց ք ձգել սատկող շան վրայ, որովհետեւ Պատրաշն ալ ևս իրան պէտքական չէր: Նա վճռեց որ ճանապարհին հէնց որ մի անտէր մեծ շուն պատահի՝ բռնէ և լծէ սալլակին: Թէպէտ մանրավաճառը Պատրաշին շատ էժան գնով էր ձեռք բերել և երկու տարի շարունակ՝ ամառ, ձմեռ, լաւ ու վատ եղանակներին եղան նման աշխատեցրել, բայց այժմ թողեց Պատրաշին և հեռացաւ, մտածելով, թէ չարժէ մի սատկող շան համար ժամանակ և փող կորցնել:



կարմիր թշերով, սև-սև աչքերով և շէկ մազերով, որ թփերի միջից աչքերը չռած նալում էր խեղճ Պատրաշին:

Այսպէս եղաւ փոքրիկ նելլօի և Պատրաշի առաջին հանդիպումը: Ֆերունի Դասար մեծ դժուարութեամբ հասցրեց այդ թշուառ շունը իւր փոքրիկ խրձիթը: Ֆերունին նրա վրայ այնպէս խնամք տարաւ, որ Պատրաշը շատ շուտով կազդուրուեց և կանգնեց իւր հաստ ու ամուր թաթերի վրայ:

Թէ ծերունին և թէ մանուկը շատ սիրով և փաղաքշանքով էին վարւում նրա հետ: Խրձիթի մի անկիւնում յարդից անկողին պատրաստեցին: Նրանք ուշադրութեամբ ականչ էին դնում նրա շնչառութեանը, կամենալով իմանալ, արդեօք կենդանի է թէ ոչ: Իսկ երբ շունը ոտի կանդնեց և առաջին անգամ բարձրաձայն հաջեց՝ նրանք ուրախութիւնից քիչ էր մնում լաց լինէին: Փոքրիկ նելլօն մեծ հրձուանքով զարդարում էր նրա պարանոցը ծաղկի հիւսակներով և համբուրում էր նրա դունչը իւր թարմ վարդագոյն շրթունքներով:

Երբ Պատրաշը բոլորովին կազդուրուեց և

Պատրաշն ընկած էր ձորում խոտերի մէջ: Այդ օրը ամենքն շտապում էին դէպի տօնավաճառը և Պատրաշի մօտից շատերն էին անցնում թէ ոտով և թէ ձիով. բայց նրանցից ոչոք ուշադրութիւն չէր գարձնում նրա վրայ, կարծելով թէ սատկած է:

Բայց ահա զուգուած—զարդարուած գիւղացիներից յետոյ անցաւ մի թոյլ ու կաղ ծերունի: Նրա կերպարանքը շատ խղճալի էր. հազին ունէր շատ հին ու մաշուած շոր և հազիւ էր շարժում փոշոտ ճանապարհով: Նա Պատրաշին նկատելով՝ կանգ առաւ և զարմացմամբ նայեց իւր շուրջը. յետոյ ցած իջաւ դէպի խոտաւէտ ձորը և կարեկցութեամբ զննեց շանը:

Ֆերունու հետ կար և մի փոքրիկ տղայ,

ովքը տեղը եկաւ՝ նոր տէրերը նոյնպէս սկսեցին  
նրան աշխատեցնել. բայց այժմ նրա մեծ և  
խելացի աչքերը զարմանք էին արտայայտում,  
թէ ինչու առաջուայ նման իրան ծեծով ու  
հայկանքով չեն զարթեցնում, և նա այն օ-  
րից դէպի իւր նոր տէրերը զգաց ջերմ սէր, որ  
պահպանեց մինչև վերջը:

Պատրաշը երախտագէտ էր, ինչպէս և  
բոլոր շները: Նա պառկած տեղից իւր խելօք  
և բարի աչքերով դիտում էր իւր բարեկամների  
ամեն մի շարժումը:

Ամեն առաւօտ ծերունի Դասար կով պա-  
հող գիւղացիների կաթը սալլակով տանում էր  
քաղաք ծախելու: Գիւղացիներն այս գործը  
յանձնում էին ծերունի Դասարին. նրանք գի-  
տէին, որ նա ապրուստի ուրիշ միջոց չունի.  
բացի սրանից գիւղացիներն ուրախութեամբ նը-  
րան էին յանձնում իրանց կաթը, որովհետեւ  
գիտէին որ ծերունին ազնիւ ու արդար մարդ է.  
իսկ իրանք պարապում էին իրանց գործերով:  
Բայց այս աշխատանքը ծերունու համար հետզ-  
հետէ ծանրանում էր: Գիւղից մինչև քաղաք  
մի վերստ կըլինէր. ութսուներեք տարեկան

ծերունու համար դժուար էր բեռնաւորուած  
սալլակը այնքան ճանապարհ քաշել:

Պատրաշը ծաղկի հիւսակը պարանոցին՝  
արևի տակ պառկած դիտում էր, թէ ինչպէս  
ծերունին տանում-բերում էր կաթնով կճռաները:

Մի առաւօտ դեռ ծերունին չէր մօտեցել  
սալլակին, որ Պատրաշն արդէն կանգնած էր  
սալլակի առաջ, կարծես ուզում էր ցոյց տալ,  
թէ ինքը պատրաստ է վաստակել այն հացը,  
որ իւր հիւսանդ ժամանակ իրեւ ողորմութիւն  
տալիս էին իրան: Ակզբում Յովհաննէս Դասար  
խղճում էր շանը, նա կարծում էր թէ անխիղճ  
բան է շունն այնպիսի ծանր գործի դնելը:

Բայց Պատրաշը յամառ էր. երբ տեսաւ որ  
իրան չեն ուզում լծել՝ նա փորձեց սալլակը իւր  
ատամներով քաշ տալ: Այն ժամանակ ծերունին  
կատարեց իւր ազատած երախտագէտ շան ցան-  
կութիւնը, և այս օրից սկսած միշտ շունն էր  
կաթը քաղաք տանում:

Քանի-քանի անգամ, ձմեռ ժամանակ,  
Յովհաննէս Դասար օրհնում էր այն ժամը,  
երբ պատահեց ձորի մէջ շունը փչող շանը:  
Ինքը շատ ծեր էր և տարէցտարի ուժից ընկ-

նում էր. ուստի նրան շատ դժուար կը լինէր ձիւնապատ և սառցապատ ճանապարհով քաշել սալլակը՝ եթէ այս ուժեղ և աշխատասէր ընկերը իրան չօգնէր:

Պատրաշը, այն սարսափելի կեանքից յետոյ, որ անց էր կացրել իւր նախկին տիրոջ մօտ՝ այժմ շատ գոհ և երջանիկ էր: Նա առանձին ուրախութեամբ քաշ էր տալիս թեթև, բայց կանաչագոյն սալլակը որ բարձած էր պղնձէ փայուն ամաններով, իսկ իւր կողքից կազալով գնում էր բարի ծերունին:

Շաշից յետոյ ժամը երեքին կամ չորսին Պատրաշը իւր գործը վերջացնում էր և բոլորովին ազատ էր լինում: Նա կարող էր արեւում ձգուած քնել, դաշտերում թափառել, խաղալ ու վազվել նելոի կամ իւր ընկեր շների հետ: Նա շատ երջանիկ էր:

Նրա նախկին տէրը, մի ինչ-որ կոռուի ժամանակ, տօնավաճառում սպանուել էր. այսպէս որ այժմ ոչոք չէր որոնում և անհանգիստ չէր անում Պատրաշին իւր նոր և սիրելի տանը:

Այսպէս անցաւ մի քանի տարի: Յովհաննէս Դաասը, որ վաղուց անառողջ

էր, բոլորովին թուլացաւ և կաթուած ստացաւ. ուստի այլ ևս չէր կարողանում սալլակի հետ գնալ: Այն ժամանակ փոքրիկ վեց տարեկան նելլօն, որ լաւ ծանօթ էր քաղաքին և շատ անգամ ուղեկցել էր պապին՝ նրա տեղն անցաւ: Այնուհետև նա էր տանում կաթը, փողերը ստանում և բաժանում տէրերին այնպիսի մի լրջութեամբ, որ ամենքը հիանում էին:

Փոքրիկ նելլօն մի սիրուն տղայ էր՝ սեւրակ ու խելօք աչքերով, կարմիր թշերով, ուկեղոյն երկար գանգուրներով, որոնք ծածկում էին նրա ուսերը: Նկարիչները հիացած էին այս խմբակի վրայ. — կանաչ սալլակը՝ պղնձէ ամաններով, մեծ շիկագոյն շունը՝ իւր գեղեցիկ սարքով, փոքրիկ տղան՝ փայտէ մեծ հողաթափներով. Նկարիչները շատ անգամ կանգնեցնում էին նրանց և նկարում:


Նելլօն և Պատրաշը այնպէս լաւ և ուրախ էին կատարում իրանց գործը, որ երբ ամառն եկաւ՝ Յովհաննէս Դաասը դարձեալ նըրանց էր քաղաք ուղարկում: Իսկ ինքը իրահամար նստում էր դռանը, ննջում էր արեւում և հանգիստ սրտով սպասում նրանց վերադար-

ձին: Երբ նրանք տուն էին վերադառնում՝  
իսկոյն արձակում էին Պատրաշի լուծը, և նա  
ուրախ հաջոցով սկսում էր վազվակել, իսկ Նել-  
լօն Հպարտ-Հպարտ պատմում էր իւր պապին  
օրուայ անցքերը: Այնուհետև բոլորը միասին  
ուրախ նստում էին ճաշի, որ լինում էր հաց  
ու կաթ, կամ ապուր: Երբ արեւը մայր էր  
մտնում՝ նրանք հանգիստ պառկում էին քը-  
նելու. իսկ ծերունին մեղմ աղօթքը էր մրմնչում:

• Այսպէս անցնում էին օրեր ու տարիներ:  
Նելոն և Պատրիաշը իրանց բախտաւոր էին  
զգում, մահաւանդ գարունն ու ամառը նրանք  
շատ ուրախ էին անց կացնում:

Նրանք սովորութիւն ունեին գործից յետոյ ջրանցքի ափին պառկել խոտի վրայ ուղիտել, թէ ինչպէս ծանր բեռնաւորուած նաւերը կամաց լողում էին նրանց մօտով և կարծես իրանց հետ բերում էին ծովալին թարմ օդ:

Զմեռը նրանց կեանքը աւելի ծանր էր  
լինում: Նրանք այս ցուրտ եղանակին պէտք է  
վեր կենացին դեռ լոյալ չբացուած. շատ ան-  
գամ այնպէս շտապում էին, որ չէին կարողա-  
նում կուշտ ուտել: Գարունն ու ամառը նրանց



Խրճիթը շատ գեղիվան սկզբանի ամբողջովով նայի ամբողջովով և ծագուած էր կանաչ խաղմող ողլթերով։ Իսկ ձմեռը այդ փոքրիկ խրճիթի ճեղքերից քամին ներս էր փչում և երբեմն էլ ջուրը ներս էր լցւում, յատակը ծագուած և սառչում էր։

Բայց նրանք չեն տրտնջում. մանուկը  
փայտէ ոտնամանները հագին, շունն էլ իւր  
առողջ թաթերով, բոժոժների ուրախ ձայնի  
ուղեկցութեամբ՝ աշխուժով գնում էին սառցա-  
պատ դաշտով։ Պատահում էր որ քաղաքում  
որևէ բարի կին տալիս էր նրանց կերակուր  
կամ մի կտոր հաց. երեմն էլ առատաձեռն  
վաճառականներից մէկը միքանի կտոր փայտ  
էր ձգում սալլակը. կամ իրանց գիւղացի կա-  
նայքը մի-մի անգամ փոքր ինչ կաթ էին  
տալիս,—ահա այդ ժամանակ նրանց ուրախու-  
թեանը չափ չէր լինում։ Նրանք վազ էին  
տալիս ձիւնապատ դաշտերով և ուրախ ճշոցով  
տուն ընկնում։

Այսպէս նրանք բախտաւոր էին: Պատրաշն  
երբեմն ճանապարհին պատահում էր շների,  
որոնք ծեծի ու հայկոյանքների ենթարկուած՝  
գիշեր-ցերեկ աշխատում էին անդադար, իսկ

Նրանցից միքանիսը ցըտից ու քաղցից սատկում,  
վէր էին ընկնում փողոցներում. Նրանց տեսնե-  
լիս՝ Պատրաշն իրան համարում էր ամենա-  
երջանիկ արարածը աշխարհիս վրայ և ուրա-  
խութեամբ կատարում էր իր պարտաւորու-  
թիւնը:



Պիայն մի բան անհանգիստ էր անում  
Պատրաշին: Քաղաքում եղած ժամանակ Նել-  
լօն յաճախ գնում էր եկեղեցի և միքանի ժամ  
մնում էր այնտեղ. իսկ Պատրաշը այդ ժամա-  
նակ պառկում էր սալայատակի վրայ և երկար  
սպասում նրան: Նա չէր կարողանում հասկա-  
նալ, թէ ի՞նչ գործ ունի Նելլօն եկեղեցում: Մի  
երկու անդամ փորձեց անձամբ նայել և սալա-  
կը քաշ տալով մինչև անգամ աստիճաններով  
բարձրացաւ մինչև եկեղեցու դռւոր, բայց ամեն  
անգամ նրան վռնդում էին:

Պատրաշին դլխաւորապէս անհանգիստ էր  
անում այն, որ Կելլօն եկեղեցուց դուրս գալիս՝  
մի ուրիշ տեսակ էր լինում. Նրա դէմքը երբեմն  
գունատ, երբեմն կարմրած և յուզուած էր լի-  
նում. իսկ երբ տուն էին դառնում, նա ոչ  
խաղում էր, ոչ վազվզում, այլ լուռ ու մունջ  
նստած դիտում էր վերջալոյսը:

«Արդեօք ի՞նչ է պատահում նրան», — մտածում էր Պատրաշը: Նրա խելքով՝ փոքրիկ երեխան այնպէս լուրջ չպիտի լինէր, ուստի ամեն կերպ աշխատում էր, որ Նելլօն իւր հետթափառի արևափայլ դաշտերում կամ փողոցներում: Բայց Նելլօն դարձեալ գնում էր եկեղեցի:

Աւելի յաճախ նա մտնում էր քաղաքի մեծ եկեղեցին, որտեղ շատ երկար էր մնում, այնպէս որ ժամասացութիւնից յետոյ ծառաները գալիս դուրս էին հանում նրան, որ եկեղեցու դռները փակեն: Այն ժամանակ միայն Նելլօն ակամայ դուրս էր գալիս և շանը դրկելով՝ համբուրում էր նրա դունչը և ամեն անգամ միենոյն անհասկանալի խօսքերը կրկնում: «Ա՛խ, Պատրաշ, ի՞նչպէս կրցանկայի նրանց տեսնել»: — «Այդ ումն է ուզում տեսնել», կարծես մտածում էր Պատրաշը, իւր խելացի ու մեծ-մեծ աչքերով նրան նայելով:

Մի անգամ պահապանը դուրս եկաւ եկեղեցուց և դուռը մոռացմամբ բաց թողեց: Ճունը դէպքից օգուտ քաղելով՝ ներս ընկաւ եկեղեցի: Պատրաշը վերջապէս տեսաւ Նելլօին, որ ծունկ չոքած սուրբ սեղանի առաջ՝ անթարթ-

աչքով նայում էր Վերափոխման պատկերին, որի մօտ կախուած էին երկու ուրիշ պատկերներ: Նելլօն գգուշութեամբ դուրս տարաւ իւր ընկերոջը և լալագին ասաց.

— Ի՞նչ սարսափելի բան է, Պատրաշ, որ ես չեմ կարող նրանց տեսնել միայն այն պատճառով, որ աղքատ եմ և չեմ կարող վճարել: Ես հաւատացած եմ, որ երկելի նկարիչ Ուուբէնսը ոչ միայն հարուստների համար է նկարել, այլ ամենքի համար. այն-ինչ՝ նրա հրաշալի նկարները ցոյց են տալիս միայն փող ունեցողներին: Ա՛խ, Պատրաշ, ինձ թւում է, որ ուրախութիւնից կըմեռնէի, եթէ գոնէ մի անգամ կարողանայի նրանց վրայ նայել:

Պատրաշն այժմ հասկացաւ, թէ բանն ինչումն է. բայց ինչով կարող էր օգնել իւր փոքրիկ ընկերոջը. — որտեղից դժոնէր այն փողը, որ Նելլօն վճարէր և մտնէր Ուուբէնսի նկարները տեսնելու: Երկուսն էլ այս լաւ էին հասկանում, բայց և այնպէս երեխան ցանկանում էր որևէ կերպով նրանց տեսնել:

նում էր, թէ ինչպէս Նելօն զմայլած դիտում  
էր վերջալոյսի և արշալոյսի մեղմ փայլմունքը  
և ինչպէս նրա աչքերը ցոլում էին ուրախու-  
թիւնից: Այսպիսի բոպէներին Նելօն փաթաթ-  
ում էր շանը, և նրա փայլող աչքերից հոսած ջերմ  
արտասուքները ողողում էին Պատրաշի երեսը:

— Նելօ, ասում էր երեմն ծերունի Յով-  
կաննէսը, ես հանգիստ կրմտնէի գերեզման՝ ե-  
թէ իմանալի, որ դու մի խրճիթի և մի կտոր  
հողի տէր կրդառնաս:

Տուն ու տեղ ունենալը ծերունու համար  
ամենամեծ երջանկութիւն էր, և նա իւր սիրելի  
թոռանը սրանից աւելի լաւ բան չէր կարող  
ցանկանալ: Բայց Նելօին ամենևին չէր գրա-  
ւում գիւղական կեանքը. Նրա խելք ու միտքն  
այն էր, որ երևելի նկարիչ դառնար: Նրա ե-  
րևակայութեանը պատկերանում էին հրաշալի  
տեսարաններ, և ամեն գեղեցիկ բան նրան  
հրապուրում էր: Այս բոլորը միայն Պատրաշին  
էր յայտնի, որովհետև Նելօն միայն նրան էր  
հաղորդում իւր գաղտնիքները՝ երբ քաղաք էին  
գնում, կամ երբ միասին պառկած էին լինում  
ջրի ափին, խշխշուն եղէգների մէջ:

Պ.

Նելօն իւր խելք ու միտքը տուել էր  
նկարչութեան: Երբ նա սալլակի կողքից անց  
էր կենում հին քաղաքի միջով, մտքով վերա-  
նում էր դէպի այն հրաշալի աշխարհը, որտեղ  
թագաւորում էր երևելի նկարիչ Թուբէնսը:  
Նելօն այդ բոպէներին բոլորովին մոռանում էր  
աշխարհը. չէր զգում որ ինքը մերկ, քաղցած  
ու յոդնած է: Այս խեղճ, անգրագէտ որբ երե-  
սան նկարչութեան մեծ տաղանդ ունէր, բայց  
այս բանը դեռ ոչոք չգիտէր և մինչև անդամ  
ինքն էլ չէր հասկանում:

Միայն նրա անրաժան ընկեր-Պատրաշն  
էր տեսնում, թէ ինչպէս Նելօն քարերի վրայ  
նկարում էր այն բաները, ինչ որ տեսնում էր.  
Հատ անդամ լսում էր, թէ ինչպէս նա գիշեր-  
շատ անդամ լսում էր, թէ ինչպէս նա գիշեր-

Այսպիսի ցանկութիւնները դժուար է խօսքերով արտայալու և ամենքը չեն էլ հասկանայ: Եթէ ծերունուն յայտնի լինէին Նելլօի այս երազները՝ նա շատ պիտի շփոթուէր, որովհետեւ նա գեղարուեստի մասին իսկի հասկացողութիւն չունէր. պանդոկներում կախ արած կոպիտ ու հասարակ նկարները նրա համար նոյնքան գեղեցիկ էին, որքան Պուբէնսի ամենահրաշալի նկարները:

Նելլօն իւր ցանկութիւնները բացի Պատրաշից յայտնում էր նաև փոքրիկ Ալօփին, որ ապրում էր բլրակի վրայ եղած հին ջաղացում: Նրա հայրը ջաղացպան էր և գիւղի մէջ ամենառունեղ մարդն էր համարւում: Փոքրիկ Ալօփան մի շատ սիրուն աղջիկ էր՝ կլոր ու առողջ գէմքով, մեծ ու սերրակ աչքերով: Նա պարզամիտ և ուրախ երեխայ էր և ամենից շատ սիրում էր Նելլօի և նրա հաւատարիմ ընկեր Պատրաշի հետ խաղալ: Նրանք միասին վազվում էին դաշտերում, ձնագնդի էին խաղում, ծաղիկներ ու պտուղներ էին քաղում, երբեմն միասին գնում էին գիւղի հին եկեղե-

ցին և յաճախ նստում էին ջաղացպանի տանը վառարանի առաջ:

Մի անգամ Ալօփի հայրը՝ Կօգէղը, որ մի բարի, բայց փոքր ինչ կոպիտ մարդ էր, հանդիպեց հետևեալ գեղեցիկ տեսարանին: Ջաղացի ետեւը ընդարձակ մարգագետնի վրայ նստած էր իւր փոքրիկ աղջիկ Ալօփան, Պատրաշը կողքին պառկած՝ գլուխը դրել էր նրա ծնկանը, երկուսն էլ զարդարուած էին ծաղկէ պսակներով. իսկ Նելլօն սրանց դիմացը նստած՝ ածուխով նրանց պատկերները նկարում էր մի մաքուր սպիտակ տախտակի վրայ:

Ջաղացպանը կանգ առաւ և նայնց նկարին. պատկերն այնքան նման էր, որ ջաղացպանը ապշած մնաց: Բայց շուտով նրա շփոթութիւնն անցաւ. նա յանդիմանեց Ալօփին, որ փոխանակ մօրն օգնելու, թափառում է անգործ, և տուն ուղարկեց լեղապատառ ու արտասուող աղջկան: Յետոյ դարձաւ դէպի Նելլօն և տախտակը խլեց նրա ձեռից:

— Դու յաճախ ես պարապում այսպիսի յիմար բաներով, հարցրեց նա. նրա խօսուածքի ձեւը կոպիտ էր և ձախնը դողում էր:

— Ես ինչ որ տեսնում եմ նկարում եմ,  
երկչոտութեամբ շշնջաց նելօն և սաստիկ  
կարմրելով գլուխը կախ ձգեց:

Զաղացպանը մի ըոպէ լուռ մնաց. յետոյ  
նելօն մի արծաթ զրամ տուեց ասելով.

— Դու ժամանակդ զուր ես վատնում. առ  
այս փողը և պատկերն ինձ տուր, այդ շատ  
նման է աղջկաս, կնոջս մեծ բաւականութիւն  
կըպատճառէ:

Նելօն դէմքից կարմրութիւնն անցաւ. նա  
գլուխը վեր բարձրացրեց և ուղիղ Կօդէզի երե-  
սին նայելով՝ պարզութեամբ ասաց.

— Մօտդ պահիր և' փողը, և' պատկերը. դուք  
շատ անգամ էք ինձ բարութիւն արել: Յետոյ  
Պատրաշին կանչեց և դաշտով տուն գնա-  
ցին:

Կօդէզը տուն ուղևորուեց վրդովուած:

— Զալէտքէ թոյլ տալ Ալօիզին, որ այն-  
պէս յաճախ խաղ անէ այն տղայի հետ, ասաց  
նա կնոջը, մեր աղջիկը նրա ընկերը չէ: Ալօ-  
զան հարուստ է, իսկ նա աղքատ:

— Բայց նա աղնիւ ու բարի տղայ է, ա-  
սաց կինը, հիացած նայելով պատկերին, որ

կախեց վառարանի վերև, ժամացոլցի և խա-  
չելութեան պատկերի մէջտեղը:

— Ճիշտ է, ասաց ջաղացպանը, գարեջրի  
բաժակը դատարկելով:

— Ուրեմն ինչո՞ւ միասին չխաղան, երկչո-  
տութեամբ հարցրեց կինը:

— Խելքիդ զօռ մի տար, բանը մի անգամ  
են ասում. ասացի որ նրանք յարմար ընկերներ  
չեն, կոպիտ կերպով ընդհատեց ջաղացպանը:

Ալօիզին այց ևս նելօն մօտ չէին թող-  
նում: Նելօն այս բանը նկատեց և շատ վիրա-  
ւորուեց: Նա չէր հասկանում թէ ինքը ինչ  
յանցանք է զործել, որ այնպէս անարդար կեր-  
պով են վարւում իւր հետ: Բայց նա հպարտ և  
զգայուն երեխայ էր. ուստի ինքն էլ դադարեց  
ջաղացը գնալուց. և երբ փոքրիկ Ալօիզան երբեմն  
նելօն մօտ էր վազում և մտերմաւթեամբ նրա  
ձեռը բռնում՝ այն ժամանակ նելօն ժպիտն  
երեսին ասում էր.

— Սիրելի Ալօիզա, մի գար ինձ մօտ և մի  
բարկացնիր հօրդ. նա չէ ուզում, որ ինձ հետ  
լինիս, կարծում է թէ ես քեզ ծուլութիւն եմ  
սովորեցնում:

Նելոն կարծում էր թէ ջաղացպանն այն  
պատճառով բարկացաւ նրա վրայ, որ նա հա-  
մարձակուել էր Ալօիդի պատկերը նկարել:

Առաջ՝ տուն դառնալիս՝ սովոր էր ջաղացի  
մօտ կանգառնել և բարեւել նրա մէջ ասլրողներին.  
այդ ժամանակ Ալօիգան իւր փոքրիկ ու սպի-  
տակ ձեռը դուրս էր հանում պատուհանից և  
Պատրաշին մի ոսկոր կամ հացի կտոր ձգում:  
Իսկ այժմ շունը տխուր նայում էր ջաղացի  
փակ դռանը, երեխան էլ նրա մօտով անցնում  
էր շտապ-շտապ, դառնացած սրտով: Աղջիկն  
այդ ժամանակ գործը ձեռին՝ նստած էր լի-  
նում վառարանի մօտ և երբ տեսնում էր, թէ  
ինչպէս նրանք անց են կենում՝ լաց էր լինում,  
և արտասուքը թափում էր նրա ձեռագործի  
վրայ:

Քանի գնում էր երեխաներն այնքան ուշ-  
ուշ էին տեսնում. նրանց առաջուայ պարզու-  
թիւնն ու զուարթութիւնը վաղուց անյայտացել  
էր: Բայց փոքրիկ տախտակը դեռ կախուած  
էր նրանց վառարանի վերև և Նելոն չէր կա-  
րողանում հասկանալ, թէ ինչու իւր նկարն  
ընդունեցին, իսկ իրան վոնդեցին: Բայց նա

չէր տրտնջում. նա սովոր էր ցաւերն ու հոգ-  
սերը լռութեամբ տանել:

— Մենք աղքատ ենք, շատ անդամ ա-  
սում էր նրան ծերունի Յովհաննէսը, մենք  
պարտաւոր ենք լռութեամբ տանել բոլորը՝ ինչ  
որ Նախախնամութիւնը մեղ կըտայ, թէ՛ լաւ,  
թէ վատ. Խեղճերը որեւէ բան ցանկանալու ի-  
րաւունք չունին: Տղան լռութեամբ լսում էր  
այս խօսքերը, որովհետեւ ծերունուն շատ էր  
յարգում. բայց ինչ-որ յուսոյ քաղցր ձայն կար-  
ծես շշնջում էր նրա ականջին. «Խեղճերը  
նոյնպէս կարող են մեծ մարդ դառնալ, մարդ-  
կանց և ճակատագրի կամքի հակառակ»: Այս  
հանձարեղ տղան մեծ հաւատ ունէր իւր ուժե-  
րի վրայ:

Մի անդամ փոքրիկ Ալօիգան արտասուա-  
լեց աչքերով նրա մօտ վազեց և սկսեց պատ-  
մել, թէ վաղը իւր անուանակոչութեան տօնն  
է, բայց ծնողները իրան թոյլ չեն տուել Նել-  
օին էլ հրաւիրել ընթրիքի: Նելոն քնքու-  
թեամբ համբուրեց Ալօիդին և վստահութեամբ  
ասաց.

— Մի լար, սիրելի Ալօիգա. ժամանակով

ամեն բան կը փոխուի: Կը դայժամանակ, որ այն  
տախտակն էր, որ ես հօրդ ընծայեցի՝ ոսկու  
քաշով կը ծախուի: Այն ժամանակ հայրդ էր  
իւր դռները իմ առաջ չի փակի: Թու ինձ սի-  
րիք, փոքրիկ Ալօիզա, իմացիր որ ես երևելի  
նկարիչ եմ դառնալու:

— Իսկ եթէ չսիրեմ, ասաց աղջիկը արտա-  
սուախառն ժպիտով:

Նելլօն, որ աչքերը յառել էր դէպի հե-  
ռուն երևացող եկեղեցին՝ ցածր ձայնով խօսեց.

— Այնուամենայնիւ ես երևելի նկարիչ կը-  
դառնամ: Այս, Ալօիզա. կամ երևելի մարդ կը-  
դառնամ, կամ կը մեռնեմ:

— Ուրեմն դու ինձ չես սիրում, միամտու-  
թեամբ ասաց Ալօիզան և հեռացաւ նրանից:

Բայց Նելլօն ժպտաց, դլուխը շարժեց և  
դաշտով գնաց դէպի իրանց տունը: Նա ճանա-  
պարհին գնում և երևակայում էր. — Եբբ թէ  
ինքն արդէն հասել է փառքի, ամենքը ճանա-  
չում են իրան և պատահելիս ուրախութեամբ բա-  
րեւում. իսկ գիւղացիները՝ շշնջում են միմեանց  
ականջին. «Նայեցէք, դա երևելի նկարիչ է,  
ամբողջ աշխարհում հռչակուած է դրա անունը.

Բայց դա մեր փոքրիկ ու խեղճ նելլօն է, որ  
շարունակ կաթն էր տանում քաղաք ծախելու:  
Մտածում էր, որ այն ժամանակ սպազի համար  
թանկադին մահուդէ և թաւիշէ շորեր կարել  
կը տայ: Պատրաշի համար կը գնէ ոսկէ վզնոց և  
կասէ. «Ահա իմ ընկերս, ահա նա՝ որ իմ մի-  
ակ բարեկամն էր»: Իւր համար միւսեծ, սպի-  
տակ մարմարէ պալատ կը շինէ՝ շքեղ այգինե-  
րով շրջապատած. Նրա մէջ կապրեն բոլոր աղ-  
քատ երեխաները, անտուն-անտէր որբերը, ըն-  
դունակ պատանիները, որոնք ձգտում են դէպի  
բարին ու գեղեցիկը...

Նելլօն այնակէս էր ընկղմուել այս փայտուն  
և անշահասէր մտքերի մէջ, որ իրան լիովին  
երջանիկ էր զգում. մինչև անդամ նա մոռացել  
էր, որ այդ օրը Ալօիզի տօնն էր, բոլոր գիւ-  
ղացի երեխաներ նրա մօտ երգում, ուրախանում  
էին, ուտում էին անուշահամ կարկանդակներ  
և սրնդով պար էին գալիս. իսկ ինքը տանը  
միայն ցամաք հաց ունէր ուտելու:

— Վնաս չունի, Պատրաշ, ասաց նա շա-  
նը գրկելով, երբ երկուսն էլ նստած էին խրճիթի  
շէմքին և ականջ էին դնում ջաղացից հնչող

ուրախ ձայներին. — վնաս չունի, Պատրաշ,  
ամեն ինչ կըփոխուի:

Նելլօն հաւատ ունէր ապագայի վրայ.  
իսկ Պատրաշի կարծիքով՝ ջաղացում դրուած  
համեղ ընթրիքն աւելի լաւ էր, քան թէ ա-  
պագայի փայլուն ցնորքները:

Եւ Պատրաշն, ամեն անգամ, ջաղացպան  
Կօգէզի տան մօտով անցնելիս բարկացած մըռ-  
մուում էր:



— **Ա**յսօր Ալօիզի անուանակոչութեան տօնն  
է, այնպէս չէ, ասաց ծերունի Յովհաննէսը, որ  
պառկած էր սենեակի մի անկիւնում:

Տղան գլխով արեց, բայց նա աւելի ուրախ  
կըլինէր, եթէ ծերունին ամենսին չկաշէր այդ  
օրուայ մասին:

— Ի՞նչու դու էլ չես գնացել, Նելլօ, շա-  
րունակեց պապը, չէ որ ամեն տարի գնում էիր:

— Դու հիւանդ ես, և ես չուզեցի քեզ  
միայնակ թողնել, շշնջաց տղան, կախ գցելով  
իւր գեղեցիկ գլուխը:

— Է՛հ, դա ինչ պատճառ է. Կօրաքոյրդ  
կրգար և մօտս կընստէր, ինչպէս շատ անգամ  
անում է, երբ դու տանը չես լինում: Ի՞նչ է  
պատահել, Նելլօ, չինի թէ կուուել ես փոքրիկ  
Ալօիզի հետ:

— Ո՞չ, պապիկ, ընդհատեց տղան սաստիկ կարմրելով. ուղիղն ասած՝ Կօդէզը այսօր ինձ չէ հրաւիրել. նա ինչ-որ հետո լաւ չէ:

— Մի վատ բան խօս չես արել:

— Կարծեմ ոչինչ. ես մի անգամ նկարել եմ Ալոիզի պատկերը տախտակի վրայ, ուրիշ ոչինչ:

— Ըստ...

Դերունին ամեն բան հասկացաւ: Նա թէև պառկած էր չոր տերևներից շինած անկողնում, բայց չէր մոռացել մարդկանց բամբասանքը: Նա քնքշութեամբ սեղմեց իւր կրծքին Նելլօի գանգրահեր գլուխը և դողդոջուն ձայնով ասաց.

— Պու շատ խեղճ ես, որդիս... սիրտդ շատ է վշտացած:

— Ո՞չ, ես հարուստ եմ, շշնջաց Նելլօն: Եւ խսկապէս այդ շնորհալի տղան իւր մէջ ըդգում էր մատաղ հանճարի ոյժը և իրան հարուստ էր համարում:

Նա դուրս եկաւ և խրճիթի դռանը կանգնած՝ նայում էր աստղազարդ երկնքին և թե-

թև քամուց տատանուող բարձր սօսիներին. աշնանալին խաղաղ գիշեր էր:

Ջաղացի բոլոր պատուհանները լուսաւորուած էին, և այստեղից Նելլօի ականջին հասնում էին սրնգի հնչիւնները: Արտասուքի խոշոր կաթիւները գլորում էին նրա աչքերից, բայց նա դարձեալ ժպտում և ասում էր. «յետո՛յ, յետո՛յ»:

Նա այնքան ժամանակ կանգնեց դուրսը՝ մինչև որ ջաղացում մթնեց և ձայները դադարեցին:

Այն ժամանակ միայն Պատրաշի հետ ներս մտաւ և միասին քաղցր քնեցին:



Զ.

Եկալոն մի գաղտնիք ունէր, որ միայն  
Պատրաշին էր յայտնի: Խրճիթին կլց մի փոք-  
րիկ շինութիւն կար, ուր միայն Նելլօն էր  
մտնում. մի տխուր և անշուք տեղ էր այն,  
բայց հիւսիսային կողմից պայծառ կերպով լու-  
սաւորուած: Այնտեղ նա շինել էր մի փայտէ  
գրակալ և հասարակ գորշագոյն թղթի վրայ  
նկարել էր իւր անժիւ երևակայութիւններից  
մինք: Ոչոք նրան բան չէր սովորեցրել. ներկեր  
գնելու նա ոչ մի հնար չունէր և շատ անդամ  
իրան զրկում էր հացից, որ գոնէ թուղթ կա-  
րողանաւ գնել: Նա նկարում էր միայն սև կամ  
սպիտակ գոյնով: Նելլօն կաւիճով նկարել էր մի  
ծեր փայտահատ՝ նստած ձառի կոճղին: Նա  
շատ անդամ տեսել էր իրանց հարեան Մի-  
քայէլին այս ձևով նստած երեկոներին:

Թէպէտ Նելլօն չէր սովորել և չգիտէր օ-  
րինաւոր նկարել՝ բայց և այնպէս այդ նկարը

շատ սիրուն գուրս էր եկել: Ծեր Միքայէլը  
կարծես կենդանի նստած լինէր. նրա յոգնած  
ու կնճռուտ դէմքը տիսրութիւն էր արտայա-  
տում. այնտեղ երեսում էր մի երկարատև կեանք՝  
ծանրաբեռնուած դառն աշխատանքով, միայնակ  
ծերութեամբ, չարչարանքներով և համբերու-  
թեամբ... պատկերը ներկայացնում էր գիշե-  
րային վերահաս խաւարը:

Պատկերը թէև կռպիտ էր նկարած և  
շատ պակասութիւններ ունէր, բայց այնուամե-  
նայնիւ նա կենդանի էր և գեղեցիկ, ինչպէս  
ինքը կեանքը: Նելլօն յոյս ունէր, գուցէ մի  
անիրազործելի յոյս, որ իւր նկարն ուղարկէ  
մրցման հանդէսը: Այդ ժամանակ յայտարարուած  
էր որ ամեն մի տաղանդաւոր տղայ, տասնեւութ  
տարեկանից փոքր՝ կարող է ներկայացնել իւր  
ինքնուրոյն աշխատանքը՝ կաւիճով կամ մատի-  
տով նկարած, և ամենալաւ նկարի հեղինակը  
կըստանաւ երկու հարիւր ֆրանկ \*) պարզե:  
Մայրաքաղաքից երեք ամենալաւ նկարիչներ  
էին հրաւիրուած ուղարկելիք նկարները քննելու:

Ամբողջ գարունը, ամառն և աշունը Նել-

\*) Մի ֆրանկը մօտ 40 կոպէկ արժէ:

լոն աշխատում էր այդ նկարի վրայ: Նա գիտէր, որ եթէ այդ նկարը յաջողակ դուրս դար՝ ինքը անկախութեան առաջին քայլը արած կըլինէր և այդպիսով հնար կունենար սովորել իւր սիրած արուեստը:

Այս մասին Նելօն ոչոքի բան չէր ասում. պապը չէր կարող նրան հասկանալ, իսկ փոքրիկ Ալօփան կորած էր նրա համար: Նրա գաղտնիքը յայտնի էր միայն Պատրաշին, որ միշտ ներկայ էր լինում նրա պարագմունքին:

Նկարները պիտի ներկայացուէին դեկտեմբերի մէկին, իսկ վճիռը պիտի յայտարարուէր նոյն ամսի քսանեցորսին, այնպէս որ յաղթանակ տանողը ուրախ սրտով կանցկացնէր տօները:

Չմեռային ցուրտ երեկոյ էր: Նելօն յուսով և երկիւզով իւր մեծ նկարը դրեց փոքրիկ կանաչագոյն սայլակի վրայ, Պատրաշին լծեց և քաղաք տարաւ ու դրեց քաղաքային շինութեան դռների մօտ՝ ինչպէս որոշուած էր: «Գուցէ իմ նկարը բանի պէտք էլ չէ», մտածում էր նա տխրութեամբ և իւր արածն անմտութիւն էր համարում: Զէոր ինքը մի խեղճ, ոտարբորիկ ու անգրագէտ տղայ էր, ինչպէս կա-

րող էր այնպիսի նկար արտադրել, որ արժանի լինէր այն մեծ նկարիչների ուշադրութեանը:

Փոքր ինչ սրտապնդուելու համար նելլօն մտաւ եկեղեցի: Մթութեան մէջ նրան այնպէս թուաց, իբր թէ Ռուբէնսի ստուերը երևաց և իրան ասում էր. «Ու ուզում է մեծ դառնալ՝ պէտք է համարձակ լինի»:

Նելլօն մխիթարուած տուն վերադարձաւ: Նա ինչ որ կարող էր արաւ, մնացեալը թողեց Աստուծոյ կամքին:

Խստաշունչ ձմեռ էր: Երբ Նելլօն տուն հասաւ՝ գիշերն սկսեց ձիւն գալ և մի քանի օր շարունակ գալիս էր: Դաշտի միջի բոլոր ճանապարհներն ու շաւիղները ծածկուեցան, գետերը սառան, և ցուրտը քանի գնում՝ սաստկանում էր: Այդ ժամանակ կաթ տանելն էլ դժուարացաւ. դժուար էր մանաւանդ ծեր Պատրաշին. Նրա ոսկորները ցաւում էին, բայց նա երբէք աշխատելուց խոյս չէր տալիս: Նելլօն երեմն կամենում էր նրան օդնել և ինքն էր քաշում սայլակը, բայց Պատրաշն ընդդիմանում էր: Միակ օգնութիւնը, որ շունը ընդունում էր նրանից՝ այն էր, որ երբ սայլակը

դժուարութեամբ էր շարժում սառցապատ ճանապարհով՝ Նելլօն ետևից հրում էր:

—Պատրաշ, դու մնա տանը, հանդատացիր, իսկ սայլակը ինքս կըքաշեմ,—շատ անգամ ասում էր Նելլօն: Բայց Պատրաշը գալիս կանգնում էր լծակի մէջ և քաջութեամբ քաշում էր ձիւնապատ դաշտերով:

«Ոչոք չպիտի հանգստանայ, քանի որ կենդանի է», մտածում էր Պատրաշը, և երբեմն նրան թւում էր, որ շուտով նրա հանգստանալու ժամը պիտի համնի: Նրա տեսողութիւնը թուլացել էր, առաւօտները դժուարութեամբ էր արթնանում. բայց սա նրան չէր խանգարում, նա դարձեալ առաւօտները վաղ վեր էր կենում իւր յարդէ անկողնից և աշխատանքի գնում:

—Խեղճ Պատրաշ, թէ ես և թէ դու շուտով կըհանգստանանք գերեզմանի մէջ, մի անգամ ասաց ծերունի Յովհաննէսը, Պատրաշի գլուխը շոյելով: Նրանք երկուսն էլ միւնոյն ցաւն ունէին սրտերում, թէ արդեօք իրանց մահից յետոյ ով պիտի խնամէ իրանց սիրելի Նելլօն:

Ե.

**Մ**ի անգամ Նելլօն Պատրաշի հետ տուն վերադառնալիս՝ ձիւնապատ ճանապարհի վրայ գտաւ մի տիկինիկ՝ ոսկեթել ասեղնակար շորեր հազին: Թա մի տիրուն խաղալիք էր. և որովհետև Նելլօն չկարողացաւ տիրոջը գտնել՝ վըճռեց Ալօփին ընծայել:

Երբ նա ջաղացին մօտեցաւ՝ մութը բոլորովին ընկել էր: Նա մօտեցաւ Ալօփի փոքրիկ պատուհանին և կամաց բաղխեց: Աղջիկը վախեցած բաց արեց պատուհանը, և Նելլօն տուեց գեղեցիկ տիկնիկը նրան ասելով.

—Ես այդ գտայ ձիւնի մէջ, Ալօփա, առ, քեզ լինի: Թէ, մնաս բարով:

Եւ նա իսկոյն անյալտացաւ գիշերային մթութեան մէջ, այնպէս որ Ալօփան չկարողացաւ գոնէ շնորհակալութիւն յայտնել նրան:

Այդ գիշերը ջաղացում հրդեհ պատահեց: Ամբարները և շատ ցորեն այրուեցան. միայն ջաղացը և ջաղացպանի բնակարանն անվնաս մնացին: Ամբողջ գիւղը սարսափած դուրս վագեց փողոց, իսկ քաղաքից շուտով վրայ հասան հրշէջները: Ջաղացպանի բոլոր կայքը ապահովագրած էր, ուստի նա որևէ կորուստ չունեցաւ. այնուամենայնիւ նա սաստիկ կատաղած գոռում էր՝ իբր թէ տունը կրակ են տուել: Նելօն գիշերը արթնանալով՝ վագեց որ ուրիշների պէս ինքն էլ օդնէ: Բայց Կօգէզը կոպտութեամբ հրեց նրան առելով.

— Երեկոյեան դու թափառում էիր այս տեղերքը և հրդեհի պատճառն էլ քեզ շատ լաւ յայտնի պիտի լինի:

Նելօն լսում էր և շատ էր զարմանում, որ ջաղացպանն արագիսի բոպէում կարողանում է կատակ անել:

Բայց ջաղացպանը միւնոյն բանը կրկնեց նաև հետեւեալ օրը, և գիւղում լուր տարածուեց, իբր թէ Նելօն անյայտ պատճառով թափառելիս է եղել ջաղացի մօտերքը և իբր թէ նա վաղուց ատելիս է եղել ջաղացպանին, որովհե-

տեւ վերջինս արգելել է նրան փոքրիկ Ալօկղի հետ խաղալ: Ամբողջ գիւղը հարուստ ջաղացպանի շուաքիցն անդամ դողում էր, և նրան հաճոյանալու համար ամենքն էլ սկսեցին սառը և կասկածանքով վարուել Նելօնի հետ: Թէպէտ երեսին բան չէին ասում, բայց նա նկատում էր, որ ամենքի յարաբերութիւնը փոխուել է դէպի ինքը: Անմեղ և միայնակ Նելօն անկարող էր կոռուել հասարակական կարծիքի դէմ: — Դու շատ խիստ ես վերաբերում այն տղային, մի անդամ ասաց ջաղացպանի կինը իւր ամուսնուն. նա շատ ազնիւ և պատուական տղայէ, և թէւ դու նրան վիրաւորել էիր, բայց նրա մտքովն էլ չէր կարող անցնել մի այդպիսի յանցանք գործել:

Բայց Կօգէզը յամառ բնաւորութեան տէր մարդ էր. որքան էլ անիրաւացի լինէր իւր արածը՝ նա երբէք յետ չէր կանգնի:


Նելօն հպարտութեամբ և համբերութեամբ տանում էր այդ անպատճութիւնը: Միայն Պատրաշն էր հասկանում նրա ցաւերը: Յաճախ Նելօն ասում էր ինքն իրան. «Եթէ

ես պարզեւ ստանամ՝ կարելի է այն ժամանակ  
խղճան ինձ վրայ»:

Բայց այնուամենայնիւ տասն և հինգամեայ  
պատանին, որ իւր ամբողջ կեանքը անց էր  
կացրել գիւղական փոքրիկ շրջանում և ամեն-  
քից ու համակրանք վայելել՝ այժմ շատ  
վշտանում էր, տեսնելով որ այդ փոքրիկ շըր-  
ջանը իրանից երես է դարձնում։ Ֆանը էր  
մանաւանդ այսպիսի ցուրտ ձմեռ ժամանակ,  
երբ ուրիշների տանը նա պէտք է մի տաք,  
լուսաւոր անկիւն գտնէր։ Գիւղացիները ձմեռը  
աւելի մօտ էին լինում միմեանց. իսկ Նելլօի  
և Պատրաշի վրայ այս անգամ ոչոք ուշադրու-  
թիւն չէր դարձնում։ Խեղճ երեխան իւր շան  
հետ մնացել էր ցուրտ սենեակի մէջ դառն  
ճակատագրին մատնուած։ Ճատ անգամ նրանք  
առանց հացի էին մնում, որովհետև քաղաքից  
մի ուրիշ մարդ էր գալիս գիւղ և կաթն առնում  
տանում էր ծախելու. միայն երեք-չորս ընտա-  
նիք էին մնացել, որ Նելլօին էին յանձնում ի-  
րանց կաթը ծախելու։ Այսպէս ուրեմն Պատրա-  
շի բեռը շատ թեթևացաւ, բայց Նելլօի գըր-  
պանն էլ բոլորովին դատարկուեց։ Պատրաշն

առաջուայ նման կանգ էր առնում բոլոր դըռ-  
ների առաջ, որոնք այժմ փակում էին նրա  
համար։ Եւ խելացի շունը խղճալի կերպով լուռ  
և յանդիմանական հայեացք էր ձգում նրանց  
վրայ ու անցնում էր։

Հարեանների համար շատ ծանր էր իրանց  
դռներն ու սրտերը փակել նրանց առաջ և  
տեսնել թէ ինչպէս Պատրաշը քաշ է տալիս  
դատարկ սալլակը. բայց այդ անում էին մի-  
միայն Կօգէզին չգրգռելու համար։



սուլիս էին անում և ծիծաղում. միայն մի փոքրիկ խրճիթում խաւար էր և ցուրտ: Նելոն ու Պատրաշը աշխարհիս երեսին միայնակ էին մնացել: Հենց տօներից մի քանի օր առաջ մեռաւ խեղճ ծերունի Յովհաննէս Թաասը, որ իւր կեանքն անց էր կացրել վըշտերի ու տանջանքների մէջ: Նա վաղուց արդէն անդամալոյծ էր և հազիւ կարողանում էր խօսել, միայն իւր սէրն էր որ ոգեսրում էր նրանց: Երբ նրանք աշխատանքից տուն էին վերադառնում՝ նա միշտ քաղցր ժպիտով դիմաւորում էր նըրանց: Ֆերունու մահը նրանց սաստիկ վշտացրեց: Նրանք դառն արտասուք թափելով՝ դագաղի հետ գնացին մինչև փոքրիկ եկեղեցու մօտի գերեզմանատունը: Բացի նրանցից ուրիշ ոչոք չափսոսաց, ոչոք չիշեց խեղճ, բարի ծերունուն:

«Երեխ այժմ սա կըմեղմանալ դէպի նելլօն և թոյլ կըտայ նրան մեզ մօտ գալ», մտածում էր ջաղացպանի կինը, նայելով իւր ամուսնու վրայ, որ օջախի առաջ նատած ծխում էր:

Կօդէզը հասկանում էր կնոջ միտքը, բայց նա սաստիկ յամառ էր, և երբ հանգուցեալի

Ը.

Ծննդեան տօնը մօտենում էր: Խիստ սառնամանիքը սկսուել էր. շատ ձիւն էր եկել, իսկ գետի սառուցն այնպէս էր ամրացել, որ նրա վրայով ազատ անցնում էին թէ ձիով և թէ ոտով: Ծննդեան տօներին այս գիւղի բնակիչները առկասարակ շատ ուրախ ժամանակ էին անց կացնում: Ամենախեղճ ընտանիքներն անդամ ուտում էին անուշահամ թխուածքներ և քաղցրաւենիք. զանազան խաղեր էին սարքում, պարում էին. ամեն տեղ պատերը զարդարում էին սրբերի շաքրէ փոքրիկ արձաններով: Զիաների զիր կախած զանդակները ուրախ-ուրախ հնչում էին: Իւրաքանչիւր խրճիթում տաք կերակուր էր պատրաստում: Զուգուած աղջկերը գոյնզգոյն հագուստներով գնում-զալիս էին եկեղեցի. նրանք ուրախ-զուարիթ ա-

անշուք դադաղը նրանց տան մօտով անց էին կացնում, նա իւր դուռն անգամ չբացեց: «Այդ տղան մուրացկանի մէկն է», յամառութեամբ մտածում էր նա, «ես չեմ կամենում, որ նա խաղայ Ալօիզի հետ»:

Քաղացպանի կինը վախենում էր իւր մարդուց և չէր համարձակում նրան բան ասել, բայց երբ տեսաւ, որ Նելլօն գերեզմանատնից յետ է դառնում՝ նա Ալօիզին անթառամ ծաղիկներից հիւսած մի պսակ տուեց և հրամայեց, որ տանի գերեզմանի վրայ դնէ:

Նելլօն ու Պատրաշը կոտրուած սրտով տուն վերադառն: Ճակատագիրը նրանց հալածում էր. բանից երեաց, որ նրանք զրկում էին նաև իրանց վերջին մխիթարութիւնից—իրանց աղքատիկ, բայց թանկագին խրճիթից: Նրանք տանտիրոջ պարտ էին մի ամբողջ ամսուայ վճար, ուստի և նա դուրս արեց նրանց: Թաղումից յետոյ Նելլօն մօտ ոչ մի կոպէկ չէր մնացել: Նա փորձեց տանտիրոջից ժամանակ ինդրել, բայց անգութ և ժլատ գիւղացին չկամեցաւ սպասել: Պարտքի փոխարէն նա վերցրեց նրանց բոլոր աման-չամանը,

բոլոր կենսական պիտուքները և հրամայեց որ նրանք հէնց հետևեալ առաւոտը բնակարանից հեռանան:

Ցուրտ ու խաւար սենեակում, հանգած օջախի առաջ, տիրութեամբ անց կացրին այդ գիշերը տղան և շունը՝ միմեանց փաթաթուած: Նրանք սովոր էին ցրտին, բայց վիշտը սառեցրել էր նրանց սրտերը:

Միւս առաւոտը, Ծննդեան ճրագալուցի օրը, Նելլօն դառնապէս լաց եղաւ՝ իւր ընկերոջը կրծքին սեղմելով:

— Գնանք, սիրելի Պատրաշ, շշնջաց նա, գնանք, ընկեր, մեզ այստեղից դուրս են անում:

Նրանք կամացուկ հեռացան այդ տեղից: Այնքան վաղ էր, որ բոլոր պատուհանների փեղկերը դեռ փակ էին. միայն մի քանի գիւղացի գուրս էին եկել փողոց, որոնք մինչև անգամ ուշադրութիւն էլ չզարձրին շան և տղայի վրայ: Մի տան առաջ Նելլօն կանգ առաւ և անվստահ ներս նայեց. նրա պապը մի մեծ ծառայութիւն էր արել այդ տան բնակիչներին:

— Խնդրեմ մի կտոր հաց տուէք Պատրա-

շին, ասաց նա երկչուութեամբ, նա ծեր է և  
երէկ առաւօտուանից բան չէ կերել:

Կինը արագութեամբ վրայ խփեց դուռը,  
փնթփնթալով՝ թէ այս թանգութեան տարին  
ինչ ողորմութեան ժամանակ է:

Տղան և շունը յոդնած առաջ գնացին,  
ոչոքից այլս բան չխնդրեցին: Նրանք քաղաք  
հասան հէնց այն ժամանակ, երբ քաղաքալին  
ժամացոյցը տասը խփեց:

«Ո՞ւր է, գո՞նէ մի բան ունենայի ծա-  
խելու, Պատրաշին հաց առնէի», մտածում էր  
Նելլօն. բայց նա ոչինչ ունէր, բացի իւր հա-  
գի հասարակ շորերից և փայտէ հողաթափնե-  
ղից: Պատրաշը հասկացաւ նրա միտքը և մը-  
րից: Պատրաշը հասկացաւ նրա ձեռին դրեց,  
տերմաքար իւր դունչը նրա ձեռին դրեց,  
անկարծես խնդրելիս լինէր թէ իւր մասին ան-  
հանդիստ չինի:

Կէսօրին պիտի յայտարարուէր այն բախ-  
տաւորի անունը, որ մրցանակ պիտի ստանար իւր  
նկարի համար: Եւ Նելլօն ուզեռուեց դէպի  
այն հասարակական շինութիւնը, որտեղ թողել  
էր իւր նկարը: Այստեղ մեծ բազմութիւն էր

Հաւաքուել: Նա երկչուութեամբ առաջ գնաց  
Պատրաշից բռնած:

Քաղաքի մեծ ժամացոյցը տասներկուսը  
խփեց: Դուները բացուեցին՝ և ամբոխն իրար  
անցաւ: Ամենքը գիտէին որ ընտրած պատկերը  
փայտէ ձողից կապած պիտի բարձրացնէին,  
որ ամենքը տեսնեն: Յուզմունքից Նելլօի աչ-  
քերը մթնեցին, գլուխը պտոյտ եկաւ, ծնկները  
թուլացան: Երբ փոքր ինչ ուշքի եկաւ՝ նայեց  
բարձրացած պատկերին,—իւր նկարը չէր: Մի  
մարդ ծանր և հնչիւն ձայնով յայտարարեց, որ  
մրցանակն ստացել է քաղաքի գիշերապահի  
որդին—Ստեփանը:

Նելլօն ուշքի գալով՝ իրան գտաւ ցուցա-  
հանդիսի շինութեան քարէ աւտիճանների վը-  
րայ ընկած: Պատրաշը սաստիկ շփոթուած աշ-  
խատում էր նրան ուշքի բերել, իսկ հեռուում  
երևում էր պատանիների մի մեծ խումբ, որ  
ուրախ աղաղակներով ճանապարհ էր ձգում ի-  
րանց բախտաւոր ընկերոջը—Ստեփանին:

Երեխան վեր թուաւ տեղից, զրկեց շանը  
և շշաց.

—Ամեն բան վերջացաւ, սիրելի Պատրաշ,  
ամեն բան:

Նա շատ թուլացել էր քաղցից. իւր վեր-  
ջին ոյժը հաւաքելով՝ դանդաղ քայլերով գիւղ  
ուղևորուեց: Պատրաշը իւր բրդոտ գլուխը կախ  
ձգած՝ քայլում էր նրա կողքից:

Քուլայ-քուլայ ձիւն էր գալիս. հիւսիսից  
փչում էր ցրտաշունչ քամին. սաստիլ ցուրտ էր:  
Նրանք երկար ժամանակ գնում էին և  
երբ վերջապէս գիւղին մօտեցան՝ ժամացուցը  
չորսը խփեց:

Պատրաշը յանկարծ կանգ առաւ, նա ձիւ-  
նի տակից մի բանի հոտ առաւ և սկսեց ոտնե-  
րով ձիւնը փորել, այնքան՝ որ տակից գուրս  
հանեց մի շագանակագոյն կաշուէ քսակ և նել-  
լոին տուեց: Թէ՛ւ մուժն էր, բայց մօտակայ  
խաչելութեան պատկերի առաջ մի լապտեր էր  
վառւում, որ աղօտ լոյս էր արձակում:

Երեխան մեքենայքար քսակը լոյսին մօ-  
տեցրեց:

Քսակի վրայ դրած էր բասս Կօգէզի ա-  
նունը, իսկ մէջը վեց հազար ֆրանկի թղթա-  
դրամներ գտաւ:

Այս գիւտը ցրուեց նելլօի առաջուայ անզգա-  
յութիւնը: Նա քսակը ծոցը դրեց և Պատրաշի  
գլուխը շոյեց: Ճունը յառած աչքերով դիտում  
էր նրա դէմքը: Նելլօն ուղղակի ջաղացը գնաց,  
մօտեցաւ դռանը և բաղխեց: Ջաղացպանի կինը,  
արտասուալից աչքերով, դուռը բացեց: Նրա  
ետև կանգնած էր Ալօիզան:

—Այդ դու ես, ինեղճ տղայ, քնքշութեամբ  
ասաց կինը. շուտով հեռացիր, որ Կօգէզի աչ-  
քին չերևաս: Այսօր մեր գլխին մի մեծ փոր-  
ձանք է եկել: Նա գնացել է իւր կորցրած փո-  
ղերը որոնելու, իսկ այժմ ո՛րքան դժուար կըլի-  
նի ձիւնի մէջ բան գտնելը: Այս կորուստով մեր  
տունը քանդում է: Մենք որ քեզ այնքան  
չարիք արինք՝ Աստուած էլ մեզ պատժեց:

Նելլօն քսակը տուեց նրան և Պատրաշին  
ներս կանչեց:

—Պատրաշը քիչ առաջ գտաւ այս փողե-  
րը, ասաց նա շտապով: Այս բանը պատմեցէք  
Կօգէզին, երեխ նա այսուհետև կըխղճայ ծեր  
շանը և միշտ կերակուր ու ապաստանարան  
կըտայ: Խնդրեմ չժողնէք, որ իմ ետևից գայ  
և բարի եղէք դէպի նա:

Եւ նախ քան նրանք իւր դիտաւորութիւնը հասկանալին՝ նա համբուրեց Պատրաշին, դուռը արագութեամբ վրայ դրեց և անյատացաւ զիշերալին մթութեան մէջ:

Մայր ու աղջկի այս անսպասելի ուրախութիւնից հաղիւ կարողացան ուշքի դալ: Նրանք սկսեցին Պատրաշին փայփայել, քաղցր իւղահաց և միս բերին նրա համար և աշխատում էին նրան տաքացնել կրակի մօտ: Բայց զուր էր աշխատանքը. անմիտթար Պատրաշը դռան մօտից չէր հեռանում:

Քաղացպանը ժամը 6-ին յոդնած և յուսահատուած տուն դարձաւ:

— Կորան փողերս, ասաց նա դողդոջուն ձայնով. մենք ամեն տեղ լապտերով ման եկանք, բայց չկայ ու չկայ: Կորան աղջկաս օժիտը և մեր ամբողջ կարողութիւնը:

Կինը քսակը նրան տուեց և պատմեց եղելութիւնը: Խստասիրս ծերունին ամբողջ մարմնով դողաց և յուզուած ընկաւ աթոռի վրայ:

— Ես շատ խիստ վարուեցի խեղճ տղայի հետ, շշնջաց նա վերջապէս, արժանի չեմ նրա այսպիսի բարի վերաբերմունքին:

Փոքրիկ Ալօխզան սիրտ առնելով՝ մօտեցաւ հօրը, փաթաթուեց նրան և ասաց.

— Հայրիկ, Նելլօն դարձեալ կարող է դալ մեղ մօտ, հարցրեց նա կամացուկ:

Քաղացպանը սեղմեց նրան իւր կրծքին: Նրա խիստ, արևառ դէմքը այժմ դժգուն էր, իսկ շրթունքները դողում էին:

— Ի հարկէ, ի հարկէ, երբ կամենայ կարող է դալ, պատասխանեց նա. Ծննդեան տօներն էլ մեղ հետ կանցկացնէ. Ես մեղաւոր եմ նրա առաջ, բայց Աստուծոյ օգնութեամբ կաշխատեմ մեղքս քաւել:

Ալօխզան ուրախ-ուրախ համբուրեց հօրը, վեր լժուաւ նրա ծնկներից և վազեց դռանը նստած շան մօտ:

— Այսօր ես կարող եմ Պատրաշին լսւ հիւրասիրել, — աղաղակեց նա մանկական հըրճուանքով:

Հայրը որ գլուխը կախ էր ձգել՝ յուզուած ասաց.

— Այս, այս, հիւրասիրի՞ր շանը, ամենալաւ բաներ ուտացրու, դա արժանի է:

Քաղացը Ծննդեան տօնի առիթով ամեն

տեսակ բարիքներով լիքն էր—սերուցք, մեղր,  
տեսակ-տեսակ համեղ կերակուրներ ու քաղցրա-  
ւենիներ. տունը տաք էր և պայծառ լուսա-  
ւորուած: Ալօիզան ամեն կերպ աշխատում էր  
Պատրաշին կերակրել, բայց շունը ոչինչ չէր  
ուտում: Ճանապարհին նա շատ մրսել ու քաղ-  
ցել էր, բայց առանց նելոի չէր ուզում ոչ  
տաքանալ, ոչ մի բան ուտել: Նա դռան ա-  
ռաջ նստած էր և հենց այն էր մտածում, թէ  
ինչպէս անէ, որ կարողանայ դուրս ծլկուել:

— Նա նելոին է ուզում, ասաց Կօգէզը,  
ինչ բարի շուն է. լուսանալուն պէս ես կերթամ  
նելոին որոնելու:

Ճաղացի խոհանոցը շատ տաք էր. աղ-  
քատ հարևաններն անդադար մտնում էին  
տաքանում, մի բաժակ գարեջուր խմում, տա-  
պակած սագի մսից ուտում գնում էին: Փոքրիկ  
Ալօիզան ուրախ էր, որ վաղը իւր խաղընկերը  
պիտի վերադառնար. նա թռչկոտում և պա-  
րում էր: Կօգէզը ուրախ ժպտում և ասում էր,  
որ նա անպատճառ կապահովացնէ Ալօիզի  
փոքրիկ ընկերոջը: Տանտիկինը իւր ճախարակի  
առաջ նստած նոյնպէս ուրախ էր:

Ամենքն էլ փայփայում և հիւրասիրում  
էին Պատրաշին, բայց նրա համար ուրախու-  
թիւն չկար, քանի որ նելլօն մօտը չէր:

Երբ սեղանն արդէն պատրաստ էր՝ հիւ-  
րերը նստեցին նրա շուրջը և սկսեցին բարձրա-  
ձայն և ուրախ զբոյց անել: Այդ ժամանակ  
դուռը մոռացմամբ բաց էին թռղել. Պատրաշը  
նոյն բոպէին յանկարծ դուրս թռաւ և այն  
ցրտին ու մթանը սկսեց վագել: Նրա միակ ու-  
զածն այն էր, որ նելլօին գտնէ:



իչող քամու խուլ շառաչիւնը. խանութների գլխին դրած ցուցանակները տեղից պոկտում, խկ լապտերների բարձր սիւները շարժւում էին:

Այնքան անցորդներ էին գնացել-եկել ձիւնի վրայով և իրանց հետքերը թողել՝ որ Պատրաշը շուտ-շուտ կորցնում էր իւր բարեկամի հետքը: Բայց յոդնած ու քաղցած կենդանին չէր յուսահատւում և հետքը նորից գտնելով առաջ էր գնում առանց ուշադրութիւն դարձնելու այն անտանելի ցուրտ եղանակի վրայ:

Սուր-սուր սառոցները կտրատում էին նրա թաթերը, քամին թափանցում էր մինչև ոսկորները, բայց նա շարունակ առաջ էր գնում: Նա ուղղում էր դէպի եկեղեցին:

Եկեղեցու դռները դիշերուաց հսկումից յետոյ բաց էին մնացել: Պատրաշը քարէ սալայատակի վրայ հետքեր նկատեց. այդ հետքերով գնաց մտաւ եկեղեցի, որտեղ միայն խաւար և լուսութիւն էր տիրում:

Նելօն պառկած էր սեղանի առաջ յատակի վրայ: Պատրաշը լուսութեամբ մօտեցաւ երեխային, լիզեց նրա երեսը և կարծես փայտականով ասելիս լինէր. «Միթէ կարծում էիր

թ.

**Ա**մբողջ գիշերը ձիւն էր գալիս և նելօն հետքը կորել էր: Փոթորկալից գիշեր էր: Ճանապարհներում վառուող լապտերները հանգել էին. քաղաքին պատել էր անթափանցելի խաւարը. ոչ մի կենդանի արարած չէր երևում, ամենքն էլ զուարճանում էին իրանց տաք տըներում: Միայն ծեր Պատրաշը քաղցած փորով և գողալով թափառում էր գիշերային մթութեան մէջ. նրան ոյժ էր տալիս դէպի իւր տէրն ունեցած ամենավառ, աննենգ սէրը:

Կէս գիշերից բաւական անց էր, երբ Պատրաշը քաղաքի մութ և ծուռ ու մուռ փողոցներում գտաւ նելօնի հետքը: Մթութեան մէջ երբեմն աչքի էր ընկնում պատուհանների կիսափակ փեղկերից և տուն վերադարձող ուրախ հիւրերի լապտերների լոյսը: Լսելի էր միայն

թէ ես քեզ կըթողնեմ. չէ որ ես քո բարեկամն եմ»:

Տղան մի թոյլ աղաղակ արձակեց և սիրով գրկեց շանը:

—Մեռնե՞նք միասին, շշնջաց նա. մենք ոչոքի պէտք չենք... ամենքը մեզ թողել են...

Իբրև պատասխան՝ Պատրաշն աւելի մօտեցաւ տղային և գլուխը դրեց նրա կրծքին: Արտասուքը պատել էր նրա սեորակ ու մեծ-մեծ աչքերը:


Նրանք ամուր փաթաթուեցին միմեանց: Դիշերը շատ ցուրտ էր: Լուսամուտներում երեմն երեսում էր չղջիկը և երբեմն լոյսի մի ճառագայթ ներս էր թափանցում մութ կամարների տակ: Յուրտը նրանց թմրեցրեց: Երազում տեսնում էին նրանք իրանց բախտաւոր օրերը՝ երբ միասին վազվառում էին անաչ մարզագետինների վրայ, նատում էին գետափին եղէգների մէջ և նախում էին մօտից անց կացող նաւակներին:

Յանկարծ մի սպիտակ լոյս ներս ընկաւ և լուսաւորեց եկեղեցին: Լուսնեակը դուրս էր եկել: Նրա կաթնանման լոյսը ուղղակի ընկնում

էր Թուբէնսի երկու նկարների վրայ, որոնց վրայից վարագոյրը տղան ետ էր քաշել եկեղեցի մտնելիս: Նելլօն սթափեց և ոտի կանգնեց:

—Վերջապէս ես նրանց տեսնում եմ, աղաղակեց նա բարձրաձայն, և ուրախութեամբ ձեռները դէպի նկարները մեկնելով՝ գոհութեան արտասուք էր թափում աչքերից: —Ո՛հ Աստուած իմ, շնորհակալ եմ Քեզանից:

Նրա ոտները թուլացան և նա ծնկան վրայ ընկաւ, աչքերը չհեռացնելով հրաշալի նկարներից: Մի վայրկեանից յետոյ լոյսն անյալտացաւ, նորից պատեց անթափանցելի խաւարը և Նելլօն ընկաւ Պատրաշի կրծքին:



८

**Ա**ռաւտոտը գիւղի բնակիչները նրանց գտան  
եկեղեցաւ սեղանի առջև։ Երկուսն էլ սառել  
էին։ Նրանց վերև կախուած էին Ռուբէնսի նը-  
կարները, որոնք լուսաւորուած էին արեգակի  
հրաշալի լոյսով։ Այդ ժամանակ խստասիրու-  
կօդէզը մտաւ եկեղեցի և այս տիսուր տեսարա-  
նի վրայ դառն լաց եղաւ։

—Ես շատ խիստ վարուեցի այս տղային հետ, ասաց նա, և իմ մեղքս քաւելու համար վճռել էի կարողութեանս կէսը սրան տալ և ինձ որդեգրել:

Յետոյ եկաւ մի հարուստ երևելի նկարիչ  
և ասաց.

—Ես որոնում եմ այն նշանաւոր տղային,  
որ իսկապէս արժանաւոր էր մրցանակ ստա-  
նալու: Նրա նկարածը շատ հասարակ պատկեր

Էր—մի ծեր, յողնած վայտահատ, բայց զար-  
մանալի տաղանդով։ Ես ուզում եմ այդ հան-  
ճարեղ տղային ինձ մօտ վերցնել և նկարչու-  
թիւն սովորեցնել։ Ժամանակով նա երևելի նը-  
կարիչ կրդառնայ։

Ամենից յետոյ եկաւ փոքրիկ աղջիկը մետաքսանման գանգուրներով։ Նա սեղմելով հօրձեռը՝ սարսափելի կերպով հեծեծում էր և լուսահատութեամբ ձախն էր տալիս Նելլօին.

— Նելլօ, սիրելի Նելլօ, արթնացի՞ր, գը-  
նանք, տանը ամեն բան պատրաստ է քեզ  
Համար:

Բայց մանկան գունատ դէմքը, որ դարձ-  
րած էր դէպի Ոուբէնախ հրաշալի նկարները՝  
կարծես ամենքին ժպտալով ասելիս լինէր «ուշէ»:

Քանդի ներդաշնակ ձայնը ուրախ հնչում  
էր սառն օդի մէջ. պայծառ արեգակը լուսա-  
ւորում էր ձիւնապատ դաշտերը և ժողովարդը  
ուրախ-ուրախ անց ու դարձ էր անում փողոց-  
ներով: Նելլօն և Պատրաշը այլևս ողորմութիւն  
չէին խնդրում ոչ մէկից, նրանք էլ բանի պէտք  
չունէին:

## ՆՐԱՆՔ ԻՐԱՆց ամբողջ կեանքը միասին

Էին անց կացրել և մեռնելիս ու մեռնելուց յետով էլ անբաժան մնացին։ Երբ նրանց գտան՝ տեսան որ տղան այնպէս ամուր սեղմել էր շանը, որ առանց մեծ ջանքի անկարելի էր նրանց բաժանել իրարից։

Նրանց միասին էլ թաղեցին:

0004719  
0004711  
0004710  
0004709  
0004708  
0004707  
0004706  
0004705

ՀՀ Ազգային գրադարան



NL0004710

410  
411  
412  
413  
414  
415  
416  
417

ՀՀ Ազգային գրադարան



NL0004709

ՀՀ Ազգային գրադարան



NL0004708

ՀՀ Ազգային գրադարան



NL0004707

ՀՀ Ազգային գրադարան



NL0004712

ՀՀ Ազգային գրադարան



NL0004711

ՀՀ Ազգային գրադարան



NL0004706

